

| | |
|---|---|
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Մասնագիտական մանկավարժություն |
| ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | <i>Ինֆորմատիկա</i> |
| ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ | <i>Մանկավարժության մագիստրոս</i> |
| ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ | <i>Առկա և հեռակա</i> |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ | <i>Առկա՝ 1.5 տարի Հեռակա՝ 2 տարի</i> |
| ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԿԻԶԲ | <i>Մեկտեմբերի առաջին շաբաթը (առկա) Հոկտեմբեր, նոյեմբեր(հեռակա)</i> |
| ԾԱՆՐԱԲԵՆՆԱՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ | <i>90 կրեդիտ /ECTS/</i> |
| ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍՍՎԱՆԴՄԱՆ ԼԵԶՈՒՆ | <i>Հայերեն</i> |
| ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ | <i>Թեզի պաշտպանություն</i> |
| ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ /գիտելիք, կարողություն, հմտություն/ | <p>ԳԻՏԵԼԻՔ <i>Ուսանողն ունակ կլինի՝</i></p> <ul style="list-style-type: none"> Ներկայացնել ծրագրավորման հիմնարար սկզբունքները, գաղափարները, մեթոդները, համացանցային ռեսուրսները, կիրառական ծրագրային ապահովումները, բջջային ծրագրավորման հիմունքները, տվյալների հենքերի կառուցվածքը և դրանց իրականացումը մասնագիտական գործունեության մեջ, տվյալների անվտանգության ապահովումը: Նկարագրել արդի տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթության կազմակերպման և կառավարման գործընթացում, կիրառական ծրագրերի մշակման հիմնական սկզբունքները, միջոցները, ինֆորմատիկայի ուսուցման առանձնահատկությունները տարբեր տարիքային փուլերում, տեղեկատվության անվտանգության ապահովման արդյունավետ միջոցները: Բնութագրել մանկավարժի հիմնական գործառնությունները, դասավանդման արդի տեխնոլոգիաներն ու մեթոդները, ուսուցման որակի գնահատման ժամանակակից միջոցներն ու մեխանիզմները, դրանց կիրառման ձևերը, սովորողների տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: <p>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ</p> <ul style="list-style-type: none"> Նախագծել և իրականացնել վեբ ու մոբայլ |

| | |
|---|--|
| | <p>տեխնոլոգիաները մասնագիտական և այլ կայքերի մշակման գործընթացում,</p> <ul style="list-style-type: none"> • նախագծել և կիրառել ամպային նորարար, ցանցային տեխնոլոգիաներն ինչպես ուսումնական, այնպես էլ այլ մասնագիտական գործընթացներում, տվյալների հենքերում, • մոդելավորել տարբեր ուսումնական և մասնագիտական գործընթացներ ինչպես երկչափ, այնպես էլ եռաչափ միջավայրերում, հեռավար ուսուցման գործընթացներում: <p>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ</p> <ul style="list-style-type: none"> • Բանավոր և գրավոր հաղորդակցվել, համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, աշխատանքներում մայրենի և օտար լեզուներով, • Պատրաստել գիտական զեկուցումներ, ներկայացնել հոգեբանամանկավարժական, մասնագիտական հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, կառուցելու նախագծեր: |
| <p>ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</p> | <p><i>Մասնագիտության գործունեության ոլորտները.</i></p> <ul style="list-style-type: none"> • Կրթական հաստատություններում (հանրակրթական դպրոց, միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ)՝ որպես ինֆորմատիկայի ուսուցիչ, օպերատոր, համակարգչային տեխնիկայի մասնագետ, • ծրագրավորման կենտրոններում և կազմակերպություններում՝ որպես ծրագրավորող, ցանցային ադմինիստրատոր: |